

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹՈՒՐ ԲԱՂՐՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ԲԱՂՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Համայն հայութեան հաւատի նուիրական օրրան լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Բաղրեան, անձնապէս ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ ի մօտոյ ծանօթ ենք Ձեր բարի, ասպուածահաճոյ գործերին: Այսօր ուրախ առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին մատուցած Ձեր ծառայութեան համար, որին տեղեակ ենք թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով: Հաւատաւոր Ձեր ոգու եւ ազնիւ զոհողութեան շնորհիւ ՌԴ մայրաքաղաք Մոսկուայում փարիներ առաջ կառուցուեց Սուրբ Գեւորգ մատուռը, որ արտայայտութիւնն է ռուսահայոց եկեղեցական կեանքը միշտ աշխոյժ տեսնելու Ձեր նախանձախնդրութեան: Այսօր էլ Դուք շարունակում էք Ձեր յամենայնի զօրակցութիւնը թեմակալ առաջնորդին՝ Ձեր նիւթական եւ հոգեւոր կարողութիւնները ներդնելով յանուն Տիրախնամ թեմի շինութեան եւ պայծառութեան:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու նուիրումը բարի պտուղներ է տուել նաեւ հայրենաբնակ մեր ժողովրդի կեանքում: Ձեր ջանքերով ու հովանաւորութեամբ հիմնովին վերանորոգուեցին ու բարեզարդուեցին Գուգարաց թեմի Սուրբ Գայանէ եկեղեցին եւ յարակից շինութիւնները՝ կոչուած ծառայելու Ռսկեվանի եւ շրջակայ գիւղերի ազգաբնակչութեանը: Մենք անձամբ կատարեցինք եկեղեցու օծման սրբազան արարողութիւնը՝ փառաբանական Մեր աղօթքը բարձրացնելով առ Աստուած, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր հաւատաւոր ոգով միշտ պատրաստակամ են իրենց օգտակարութիւնը եւ հնարաւոր աջակցութիւնը բերելու մեր ժողովրդին:

Յարգարժան պրն Բաղրեան, ի գնահատութիւն Մայր Եկեղեցուն եւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին զօրակցելու Ձեր ազնիւ նախանձախնդրութեան ու արդեն իսկ բերած բազում ծառայութեանց, սիրով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնաւոր Տէրը հաւատոյ մեր հայր եւ մեծ խոստովանող Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրհնութեան եւ հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, Ձեր Տիկնոջն ու զաւակաց՝ պարգեւելով քաջառողջ ու երջանիկ կեանք եւ յարաւորոգ յաջողութիւններ ազգանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 218